**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

**ք. Երևան** «20» 02 2020թ № 252-Ա

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ

ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ և 33-րդ հոդվածների պահանջներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ Լիանա Գրիգորյանի 2020 թվականի փետրվարի 20-ի Ն/2031-2020 զեկուցագիրը և քաղաքացի Սուրեն Օհանյանի 2020 թվականի փետրվարի 7-ի դիմումը՝

**հրամայում եմ՝**

1. Նշանակել ծառայողական քննություն ոչ ծառայողական նպատակներով պետական գույքը օգտագործելու դեպքի վերաբերյալ:

2. Ծառայողական քննությամբ պարզաբանման ենթակա հարցերն են՝

1) Ուսումնասիրել անձնական նպատակներով է օգագործվել պետական գույքը, թե՝ ոչ:

2) Եթե անձնական նպատակներով է օգտագործվել, ապա որքան նյութական վնաս է պատճառվել ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը:

3. Ծառայողական քննության վարումը հանձնարարել քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովին՝ հետևյալ կազմով՝

Անի Մուրադյան – Հանրապետության նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության ներման և քաղաքացիության բաժնի պետ/հանձնաժողովի նախագահ/,

Ռուզաննա Գրիգորյան – ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետ,

Վարդանուշ Բոյախչյան – ՀՀ կադաստրի կոմիտեի անձնակազմի կառավարման բաժնի պետ

Նինա Մելիք-Մուսյան – ՀՀ արտաքին գործերի նախարարության անձնակազմի կառավարման վարչության ընդհանուր կադրային հարցերի բաժնի գլխավոր մասնագետ

Լալա Նանագուլյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարության անձնակազմի կառավարման վարչության գլխավոր մասնագետ:

Недействительная подпись

X

ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

Подписано: KHARATYAN ARMINE 7712770107

ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի <<ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 252-Ա ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Ծառայողական քննության անցկացման ընթացքում ծառայողական քննության պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ բազմակողմանի և օբյեկտիվ հետազոտման արդյունքում ուսումնասիրելով էկոնոմիկայի նախարարության լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ Արմեն Նալբանդյանի հիմնավորումները, ձեռք բերված իրավական և փաստական հանգամանքները և քննության ընթացքում հավաքված տվյալների բավարար ամբողջությունը՝ հանձնաժողովը **եզրակացրեց.**

էկոնոմիկայի նախարարությանը պատկանող պետական գույքը օգտագործվել բացառապես ծառայողական նպատակներով, ինչի արդյունքում նախարարությունը որևէ նյութական վնաս չի կրել:

Անի Մուրադյան – Հանրապետության նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության ներման և քաղաքացիության բաժնի պետ/հանձնաժողովի նախագահ/

Ռուզաննա Գրիգորյան – ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության անձնակազմի կառավարման վարչության պետ

Լալա Նանագուլյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարության անձնակազմի կառավարման վարչության գլխավոր մասնագետ

12.03.2020թ.